
ԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԻՆԵՐ



Լրացավ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Տիգրանի Մարգայանի ծննդյան 75 և գիտամանկավարժական գործունեության 50-ամյակը: Ծնվել է 1936 թ. Արցախի Բալլուջա գյուղում, ծառայողի ընտանիքում: 1953 թ. ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1958 թ. ավարտելով համալսարանը՝ վերադառնում է Արցախ, որտեղ մի քանի տարի աշխատելուց հետո, 1962 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի առկա ասպիրանտուրան՝ «քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ: 1967 թ. պաշտպանում է թեկնածուական, իսկ 1986 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ զուգահեռաբար ստանալով դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումներ:

Մ. Մարգայանը էական ավանդ ունի հայրենական տնտեսագիտության զարգացման գործում: Նրա գրչին են պատկանում գիտական տասնյակ աշխատություններ (այդ թվում՝ յոթ մենագրություն)՝ նվիրված սեփականության, պահանջմունքների և կենսակերպի հիմնահարցերին (աշխատությունները հրատարակվել են ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն):

Առաջին մենագրության («Անձնական սեփականությունը սոցիալիստական հասարակարգում», Ե., 1974) ուսումնասիրության օբյեկտը անձնական սեփականությունն էր: Ի դեպ, այդ աշխատությունը հիշյալ հիմնահարցին նվիրված ոչ միայն առաջին, այլև միակ ծավալուն աշխատանքն է (190 էջ) հայ տնտեսագիտական գրականության մեջ: Բանն այն է, որ սոցիալիստական հասարակարգում սեփականության այդ ձևը բնավ «պաշտոնական հարգանք» չէր վայելում: Երբեմն այն շփոթվում էր մասնավոր սեփականության հետ, երբեմն ուղղակի ժխտվում դրա գոյությունը: Իսկ ավելի հաճախ հասարակական արտադրության դանդաղ զարգացման ամբողջ մեղքը բարդվում էր այդ սեփականաձևի ուռճացման վրա, ինչը թուլացնում էր աշխատավորների շահագրգռվածությունը հասարակական արտադրության առաջընթացի գործում: Այստեղից էլ՝ տնտեսագետների խուսանավումները տվյալ հիմնահարցի մշակումներում: Նկատի ունենալով այդ ամենը՝ Մ. Մարգայանն իր աշխատության մեջ անձնական սեփականության հիմնահարցը քննարկել է, ամենից առաջ, հայեցակարգային տեսակետից՝ որակապես սահմանազատելով մասնավոր և անձնական սեփականությունն ու պնդելով վերջինիս անհրաժեշտությունը հասարակական առաջընթացի բոլոր համակարգերում՝ որպես անհատի ազատության, նրա համակողմանի զարգացման հիմք: Իսկ հասարակական արտադրության դանդաղ առաջընթացի պատճառները անհրաժեշտ է փնտրել հենց իր՝ արտադրության մեջ:

Մ. Սարգսյանի հաջորդ մենագրությունը («Անձնական պահանջմունքները սոցիալիստական վերարտադրության տեսության մեջ և պրակտիկայում», Ե., 1982), նվիրված է անձնական պահանջմունքների ձևավորման և զարգացման հիմնահարցերին: Այստեղ քննարկվում են անձնական պահանջմունքների հետ կապված բոլոր հիմնական հարցերը և ստանում նոր պատասխաններ: Մակայն առավել սկզբունքայինը դրանց համակարգում, ինչը և կրում է հայեցակարգային բնույթ, արտադրության և պահանջմունքների հարաբերակցության հարցն էր: Պաշտոնականը (մարքսիստական) պահանջմունքների նկատմամբ արտադրության առաջնայնության տեսակետն էր՝ այն, որ պահանջմունքները ծնվում են արտադրությունից, և վերջինիս մակարդակն է միայն որոշում առաջինների զարգացման աստիճանը: Մ. Սարգսյանը աշխատության մեջ առաջ քաշեց և ապացուցեց սկզբունքորեն հակառակ հայեցակետը՝ այն, որ մարդկանց պահանջմունքներն են պայմանավորում արտադրության զարգացման մակարդակը, քանզի ամեն մի արտադրության հետևում վերջին հաշվով կանգնած է մարդը, որի պահանջմունքների որակական սահմաններից արտադրությունը դուրս գալ չի կարող:

Մ. Սարգսյանի մյուս («Սոցիալիստական ապրելակերպը և վերակառուցումը», Ե., 1990) մենագրական աշխատության քննության նյութը կենսակերպի հիմնահարցերն են, որոնք դիտարկվում են վերարտադրության ամբողջական պարբերաշրջանի՝ արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման հիմքերի վրա:

Հաջորդ գիրքը համահեղինակային աշխատանք է, որով փաստորեն ներկայացված է Երևանի տնտեսական և սոցիալական զարգացման համալիր պլանը 1981-1985 թթ.՝ մի շարք հեղինակների վերլուծություններով և մեկնաբանություններով:

Ինչ վերաբերվում է նոր տնտեսակարգին, ապա դրա հիմնական տնտեսական հարաբերություններին են նվիրված Մ. Սարգսյանի գիտական բազմաթիվ հոդվածները:

Մ. Սարգսյանի վերջին երեք մենագրությունները (2006, 2007, 2008 թթ.) կրում են առավելապես քաղաքագիտական բնույթ և նվիրված են ռազմահայրենասիրական թեմաների: Հեղինակը, օրախնդիր համարելով երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը, ինչպես նաև Արցախյան պատերազմի մասնակցի՝ իր անմիջական պատկերացումների անհրաժեշտության մղումով հրատարակեց դրանք:

Իր գիտական մտահղացումները հասարակության առավել լայն շրջաններին փոխանցելու ակնկալությամբ Մ. Սարգսյանը վերջին տասնամյակների ընթացքում պարբերաբար հանդես է գալիս հանրապետական մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Ոչ պակաս ընդգրկուն է Մ. Սարգսյանի մանկավարժական գործունեությունը: Այն սկսվում է արդեն իսկ 1963 թվականից: Շուրջ մեկ տասնամյակ Երևանի պետական համալսարանում, իսկ այնուհետև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (որտեղ 2002 թվականից ղեկավարում է տնտեսագիտության ամբիոնը) ուսուցանում է տնտեսագիտական գիտելիքներ՝ պատրաստելով մասնագետ կադրերի շատ սերունդների: Ըստ որում, դասախոսում է հայերեն և ռուսերեն (ի դեպ, տիրապետում է նաև գերմաներեն և թուրքերեն լեզուներին):

Մ. Սարգսյանի գործունեությունը ընդգրկում է նաև բարձրագույն որակավորման գիտական կադրերի պատրաստման բնագավառը: Տարբեր տարիների նա անդամակցել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի և Խ. Աբովյանի անվան մանկավարժական

ինստիտուտի մասնագիտական խորհուրդներին, նրա ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ:

Բարձրագույն որակավորման կադրերի պատրաստման տեսակետից հատկապես արգասաբեր էր պրոֆ. Մ. Սարգսյանի 15-ամյա փորձագիտական գործունեությունը ՀՀ ԲՈՀ-ում: Մ. Սարգսյանը եռանդուն հասարակական գործիչ է, ինչն առավել տեսանելի էր հատկապես վերջին տասնամյակներում, երբ հրատապ դարձան հայրենի եզերքի սոցիալ-քաղաքական հիմնահարցերը: Արցախյան շարժման սկզբից՝ 1980-ականի 2-րդ կեսից, լինելով մասնագիտական հարցերով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հայ պատգամավորների խորհրդակցական, Մ. Սարգսյանը նյութեր էր պատրաստում նաև Արցախի իրադրության մասին: Այս տեսակետից հատկապես ուշագրավ է Լեոնային Ղարաբաղի վիճվարչության տվյալների հիման վրա նրա կազմած ընդարձակ վերլուծական տեղեկանքը Արցախի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, որին գործնական հուն տրվեց հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության կողմից: 1990 թ. սկզբին Մ. Սարգսյանը Երևանում հիմնադրում է «Մեդրագետ» հայրենակցական միությունը, որը նրա ղեկավարությամբ, Հայաստանի քաղաքացիների, տարաբնակ հայերի, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների միջոցներով, արցախյան պատերազմի ընթացքում համակարգված նյութական օգնություն է ցույց տվել ճակատին, զոհվածների և բազմանդամ ու կարիքավոր ընտանիքների, վիրավորներին: Միությունը իրականացնում էր նաև սոցիալական որոշ օբյեկտների շինարարություն:

Մ. Սարգսյանը Հայաստանի Հանրապետության ազատամարտի վետերանների միության և նրա քաղաքական խորհրդի անդամ է: Նրա բազմաբնույթ գործունեությունը գնահատվել է ըստ արժանվույն՝ պարգևատրված է չորս մեդալով, որոնցից երկուսը՝ մարտական:

Ճիշտ ապրելու դեպքում ամեն տարիք ունի իր հետաքրքրությունն ու խորհուրդը, և այդ՝ հատկապես, կրթության և գիտության մարդու համար:

Շնորհավորենք Մ. Սարգսյանին՝ իր հոբելյանի առթիվ և ցանկանանք արևշատություն ու անհատնում ավուն:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գ. Ե.
Տնտեսագիտության դոկտոր